**Հարց** Կա՞ն դեպքեր, երբ չի թույլատրվում իրականացնել էլեկտրամատակարարման պլանային ընդհատում:

**Պատասխան** Չի թույլատրվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային համայնքի բազմաբնակարան շենքերի և այն սպառողների էլեկտրամատակարարման պլանային ընդհատում, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 (10) կՎ և բարձր լարման 1-ից ավելի առանձին օդային կամ մալուխային գծերով կայանի կամ ենթակայանի երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից: Մյուս բոլոր դեպքերում մատակարարը սպառողի էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ժամը 9:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում: